

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԳՅԱՆ

ՍՈՒՆԱԶԶԻՄ-ԲԱՇԻԻ XI—XII ԴԴ. ԱՆԱՆՈՒՆ ԱՂԲՅՈՒՐԸ  
ԴՎԻՆԻ ԵՎ ԳԱՆՁԱԿԻ ՇԱԴԴԱԴՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բաղրատունյաց Հայաստանի մասին արաբական պատմական և աշխարհագրական աղբյուրների շարքում, վերջին տարիներս, ավելացավ մի նոր պատմական երկ՝ Մունաջջիմ-Բաշիի օգտագործած անանուն աղբյուրը, որը երկար ժամանակ գրեթե անմատչելի էր մնացել գիտական հասարակայնությանը, այն պարզ պատճառով, որ Մունաջջիմ-Բաշիի «Ջամի աղ-դուլայ» (Պետությունների ընդհանուր պատմություն) խորագիրը կրող պատմական երկասիրության արաբերեն բաղմահատոր բնագիրը դեռ մինչև օրս մնում է անտիպ Կ. Պոլսի ձեռագրատներում: Հրատարակվել է միայն XVIII դարի մատենագիր Ահմեդ Նեդիմի կողմից կատարված երեք հատորանոց թուրքերեն ամփոփումը<sup>1</sup>: Այս ամփոփումը կարող է հիմք ծառայել զաղափար կազմելու Մունաջջիմ-Բաշիի ստվար աշխատության մասին, սակայն մեծ չափով ենթարկված լինելով կրճատումների՝ իր պատմական տեղեկություններով, ցավոք, բավական ժլատ է:

Ահմադ իբն Լուբֆալլահ Մունաջջիմ-Բաշին (Մյունեջջիմ-Բաշը) XVII դարի հայտնի պատմիչ է<sup>2</sup>, որը ձգտել է ի մի բերել մահմեդական պատմագրության բաղմաթիվ երկերը և այդ բոլորից ստեղծել մի ամբողջական և համապարփակ տիեզերական պատմություն: Նրա աշխատության թուրքերեն ամփոփման առաջարկում օգտագործված աղբյուրները բաժանվում են երեք խմբի՝ արաբական, պարսկական և թուրքական<sup>3</sup>: Արաբական աղբյուրների մեջ հիշվում է նաև ոմն «Ֆակիհ» (այսինքն կրոնական, աստվածարան): Ահա այս անանուն կրոնավորի աշխատությունը, որը պարունակում է Շաղաղյանների, Շիրվանի և Գերբենաթի պատմությունը և ըստ Մունաջջիմ-Բաշու գրված է մոտավորապես 1106 թվականին, օգտագործվել է վերջինիս կողմից շարադրված ծավալուն աշխատության մեջ, և քանի որ XI—XII դդ. այս կարևոր սկզբնաղբյուրի սրեկ այլ բնագիր դեռ ոչ մի տեղ չի հայտնաբերվել, Մունաջջիմ-Բաշու XVII դ. արաբերեն բնագրի այս հատվածը աղբյուրագիտական բացառիկ նշանակություն է ստանում:

Մի քանի տարի առաջ Վ. Մինորսկին կոնգոնում հրատարակեց Մունաջջիմ-Բաշու աշխատության Շաղաղյաններին վերաբերող փոքրիկ հատ-

<sup>1</sup> Մահալիֆ ալ-Ախրար, Կ. Պոլիս, 1868:

<sup>2</sup> C. Brockelmann, Geschichte der arabischen Litteratur, II, 443. J. H. Kramers, Munadjjim Bashi, Enc. of Islam, III, 772.

<sup>3</sup> Թուրքական պատմական երկերի մեջ հիշվում է նաև մի հսկայական աղբյուր, որը նրեմիա Չելեպի կողմից կազմված համառոտ հայոց պատմությունն է: Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, նրեմիա Չելեպին որպես Մունաջջիմ Բաշիի աղբյուրներից մեկը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հասարակ. գիտ.), 1960, № 7—8:



վածք<sup>4</sup>: Անճափանական չէ իհարկե, որ Մունաջջիմ-Բաշու մոտ այն ենթարկվել է որոշ կրճատումների, սակայն XVII դարի պատմիչը հազիվ թե այստեղ որևէ բան փոխած կամ մոցրած լինի, բացի աշխարհագրական հակիրճ տեղեկություններ պարունակող առաջաբանից: Հատկանշական է, որ հատուկ անունների հարցում նա միշտ հարազատ է Բաղրատունիներին ժամանակակից արարական աղբյուրների մեջ եղած ձևերին, ինչպես՝ Գարիլ (Գվին), Աշութ (Աշոտ), նույնիսկ Արմինիա (բուն Հայաստան) և Բիլադ ալ-Արման (Հայոց երկիր, բյուզանդական Հայաստանի իմաստով) և այլն:

Շաղգաղյանների մասին այս հատվածը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Բաղրատունյաց թագավորության անիական շրջանի պատմության համար. կարևոր են հատկապես Գվինի և Մեծ Հայքի արևելյան նահանգների մասին եղած տվյալները: Որոշ տեղեր նա սուղակի նոր փաստեր է հաղորդում Բաղրատունյաց պատմության վերաբերյալ, ինչպես օրինակ Աշոտ III-ի հարձակումը Գվինի վրա իր գահակալության հենց առաջին տարում (953) կամ ընդհանրապես Գվինի X դարի պատմական անցքերը լուսաբանող փաստերը և այլն<sup>5</sup>:

Դժվար է որոշել, թե որտեղից Հայաստան եկան Շաղգաղյանները: Ըստ այս աղբյուրի նրանք առաջին անգամ գալիս են Գվին և ապա այստեղից գնում Գանձակ, որտեղից կրկին վերադառնում են Գվին, իսկ հետագայում, ինչպես հայտնի է, տիրանում են Անիին<sup>6</sup>:

Նրանք հավանաբար գալիս են Ատրպատականի կողմերից և առաջին հերթին Արարսի հովտով բարձրանում են Գվին: Վարդան պատմիչը, որը նրանց «Շատատիք» է անվանում, բյուզանդական տիրապետության շրջանի մասին խոսելիս, այսպես է նկարագրում նրանց հայտնվելը<sup>7</sup>: «Ի սոյն առուս կին մի Մամ անուն գայ ի Պարսից երեք որդովք ի գաւառն Փառխոսոյ առ Գրիգոր Փառաւոր իշխանն: Եւ տան որդիքն պատանդ զմայրն և աւնուն զՇօթա և զբերդն Շամիրամայ, և անտի ընտանեցեալ ընդ Ալազիղ ամիրայն Գանձակայ սպանին գնա և առին զԳանձակ և տիրեցին.— երէց որդին Պարզուան մեռաւ կարճ և իշխանացաւ ի տեղին Լելբարի<sup>8</sup> միւս եղբայրն և աւնու զՊարտաւ և զՇամբոր ի Սալարէն: Եւ եղբայր նորա կրտսեր որ Փաալուն կոչիւր սպանեալ գնա յորսին, աւնու զիշխանութիւնն...»: Դժվար է հաստատ կերպով որոշել, թե ինչպիսի աղբյուրից կարող էր XIII դարի պատմիչը X դարի անցքերի մասին հաղորդել այնպիսի տեղեկություններ, որոնք լրիվ համընկնում են մեր ձևերի տակ եղած այս նոր արարերին բնագրի բովանդակության հետ: Կարելի է միայն ենթադրել, որ նա գուցե վանական վարդապետի կորած Պատմությունից է այն քաղել<sup>9</sup>, եթե բանավոր աղբյուրներից չի օգտվել:

<sup>4</sup> V. Minorsky, Studies in Caucasian History. London, 1953. (այսուհետև Studies)- արարերին բնագիրը վերահրատարակից Բաբլում, տես՝ Труды Института Истории, XII, 1957. Վերջերս Մինորսկին հրատարակեց նաև Շիրվանին վերաբերող հատվածը A History of Sharvan and Darband, Cambridge, 1958.

<sup>5</sup> Այս մասին տես՝ Ա. Տեր-Ղևոնդյան, Գվինը Սալարյանների ժամանակ, Տեղեկագիր (հասար. գիտ.), 1956, № 12:

<sup>6</sup> Անիի Շաղգաղյանների մասին մեր նոր աղբյուրը լուծ է:

<sup>7</sup> Մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 134:

<sup>8</sup> Վարդանի մյուս հրատարակության մեջ կա՝ Լելբարի, որն ավելի ճիշտ է (Հատարումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 100), իսկ Մարգուրանը միշտ էլ գրված է Պարզուան:

<sup>9</sup> Studies, 79.



Շաղղաղյանների մասին այս դյխի սկզբում գետեղված աշխարհագրական հակիրճ տեղեկությունները Հայաստանի և Առանի մասին, ըստ Մինորակու, ուշ շրջանում են շարադրված: Շաղղաղյանների կողմից Գլինին տիրանալու պատմությունը նորություն է Բագրատունյաց պատմության համար, ինչպես նաև Վաչոյ Զորի իշխանի, Աշոտ III Բագրատունու և այլոց հարձակումները Գլինի վրա: Վաչոյ Զորի իշխանը այստեղ անվանվում է «գիրմուս» (دير موسى), որն ըստ Ս. Երևմյանի «Տեր Մոզայ» անվան աղավաղումն է, իսկ Մոզր Վաչոյ Զորի կարևոր կենտրոններից էր այդ ժամանակ: Պետք է ավելացնել նաև, որ այս բնագիրը միակ արարական աղբյուրն է, որը հիշում է Բագրատունի թագավորների կրած Շահանշահ տիտղոսը (شاهنشاه), որովհետև մնացած արարական աղբյուրները, որոնք մեծ մասամբ խոսում են առաջին Բագրատունիների ժամանակաշրջանի մասին, բավարարվում են «թագավոր հաչոյ» (ملك الارمن)<sup>10</sup> տիտղոսի հիշատակմամբ:

Շնորհիվ այս նոր աղբյուրի որոշվում է նաև Շաղղաղյանների կողմից Գլինի երկրորդ գրավման մոտավոր թվականը՝ 1022<sup>11</sup>, որը հավանական է: Այստեղ շատ ընդարձակ է Արու-լ-Ասուար ամիրային հատկացված մասը: Սա նշանավոր էր ոչ միայն Հովհաննես Ամբատի և Գաղիկ Բ-ի խոսվահույզ շրջանում Գլինում խաղացած բացասական դերով, այլև Քանձակում ունեցած իր գործունեությամբ: Հետաքրքրական է, որ ոչ միայն Արու-լ-Ասուարը այս խառնակ շրջանում կասկածելի հարարերությունների մեջ է գտնվում Բյուզանդիայի հետ<sup>12</sup>, այլ նույնիսկ նրա պապը՝ Մուհամմադ իրն Շաղղաղր Գլինից վտարվելուց հետո դիմել էր Բյուզանդիայի օգնությանը: Սա պատահական չէ, որովհետև Բյուզանդիան հաճախ էր հովանավորում քրդական ցեղերին, ինչպես օրինակ Մրուանյաններին՝ XI դարի սկզբում<sup>13</sup>:

Արու-լ-Ասուարի որդիներից մեկը կրում է Աշոտ (Աշութ) անունը և հավանարար հայ մորից էր: Կաստիվերացին հիշում է, որ այս «Ապուսուարը... էր փեսայ թագաւորին Հաչոյ Աշոտոյ»<sup>14</sup>: Ահա սույն Բագրատունի իշխանուհու որդին պետք է լիներ այս Աշոտը, որն իր պապի անունն էր կրում:

Բագրատունյաց անկման շրջանի և բյուզանդական տիրապետության մասին հետաքրքրական տեղեկություններ են Արու-լ-Ասուարի մասնակցությունը սելջուկյան արշավանքներին և ընդհանրապես Շաղղաղյանների օժանդակությունը սելջուկյաններին Հայաստանը նվաճելու գործում, որոնց մասին հայկական աղբյուրներում կան որոշ ակնարկներ<sup>15</sup>:

Բագրատունյաց Հայաստանի մասին խոսող արարական աղբյուրների մեջ կարևոր տեղ են գրավում աշխարհագիրներ՝ Իսթախրին, Իրն Հառեկալը, Մուկաղղասին և ուրիշներ, որոնց շնորհիվ մի ընդհանուր գաղափար ենք կազմում IX—XI դդ. Հայաստանի վիճակի մասին: Այս շրջանի համար արար պատմական աղբյուրների թիվը շատ չէ: Կարելի է հիմնականում հիշել Իրն Միսքաուայհին (XI դ.) և Իրն ալ-Ասիրին (XIII դ.), ուստի մեր նոր պատմական աղբյուրի ի հայտ գալը որոշակի նշանակություն ունի Բագրատունյաց

<sup>10</sup> Opus geographicum auctore Ibn Haukal, ed. J. Kramers, Lugd. Bat., II, 343.

<sup>11</sup> Studies 22.

<sup>12</sup> R. Grousset, Histoire de l'Arménie, Paris, 1947, էջ 574—575:

<sup>13</sup> Ա ս ո ղ ի կ, Պատմություն տեղեկական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 276:

<sup>14</sup> Կ ա ս տ ի վ եր ա ջ ի, Պատմություն, Քիֆլիս, 1912, էջ 109: Տես նաև Շաղղաղյանների տոհմաճառը, Studies, 6, 106:

<sup>15</sup> Կ ա ս տ ի վ եր ա ջ ի, Պատմություն, Քիֆլիս, 1912, էջ 109:



շրջանի քաղաքական պատմության ուսումնասիրման համար, և նրա հայերեն թարգմանությունը<sup>16</sup>, որը տալիս ենք ստորև, կարող է որոշ լրացումներ կատարել հիշյալ շրջանի պատմական անցքերի վերաշարադրման համար:

Բնագրում տեղ դրած հայկական հատուկ անունները թարգմանության մեջ տրված են հայկական ձևով, փակագծերի մեջ տալով նաև բնագրում հիշված արաբական ձևերը, իսկ երբ հատուկ անունները տարբերվում են արաբական մատենագրությանը հատուկ ձևերից, ապա թարգմանության մեջ տրված են նույնությամբ: Բնագրում գրված հիշքի թվականների կողքին շեղ փակագծերի մեջ գրել ենք մեր թվականության տարիները:

### ԳԼՈՒԽ ՇԱԳԳԱԳՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Չորրորդ հատվածը Առանում և Հայաստանի (Արմինիա) որոշ մասում իշխող Շաղղաղյանների մասին է:

Նրանք տասը հոգի էին և կարծում եմ որ քրդն էր: Նրանց իշխանական նստավայրը Գլինն (Գարիլ) էր և ապա Գանձակը (Ջանդա): Նրեան եկան 340 թվին (951) և անհայտացան 468 թվին (1074), իսկ նրանց իշխանության տևողությունը 128 տարի է:

[Նրանք են՝] Մուհամմադ իրն Շաղղաղ իրն Կուրտակ, ալ-Լաշքարի Աբու-լ-Հասան Ալի, ալ-Մարդուրան, Աբու-լ-Ֆառհ ալ-Ֆաղլ, Մուսա, ալ-Լաշքարի Ալի, Անուշիրուան, Աբու-լ-Ասուար Շավուր, ալ-Ֆաղլ (և Աշոտ), Ֆաղլուն:

2. Առանը մի հայտնի երկիր է, որը արևմուտքից՝ սահմանակից է Ատրրպատականին (Ազարբայջան): Արևմուտքից նրան սահմանակից է Հայաստանը, իսկ արևելքից և հարավից [նույն] Ատրպատականը, հյուսիսից՝ Կովկասի (Կարկ) լեռները: Նրա նստավայրերից են Նախձավան (Նաշաուա) քաղաքը, որը Նակչուանն է հինգերորդ [կլիմայից], երկարությունը 78 [աստիճան է], իսկ լայնությունը՝ 42, Գերբենտը (Բար ալ-Աբուար), որն այժմ կոչվում է Երկաթյա դուռ (Բար ալ-Հադիդ), բաղկացած է մի քնդարձակ երկրամասից, որն ունի անկախ իշխաններ, երկարությունն է 78 [աստիճան], իսկ լայնությունը՝ 41, իսկ ոմանք ասում են՝ 48: Նրա նստավայրերից է նաև Գանձակը հինգերորդ [կլիմայից], երկարությունն է 74, իսկ լայնությունը 48: Առանի նշանավոր քաղաքներից են Թիֆլիսը, Շամքորը, Բայլականը: Մարիբ ալ-Լանը<sup>2</sup> բաղկացած է մի քնդարձակ տարածությունից, որտեղ ապրում են լեզգիները (Լաբգ): Մա [մի անուն է], որը սարին էլ է տրվում:

Իսկ Հայաստանը (Արմինիյա), որը կարելի է [արտասանել] նաև յ-ն թեթևացնելով՝ մի անկախ երկիր է քնդարձակ հովիտների երկրում<sup>3</sup>: Նրա սահմաններն են արևմուտքից Հայոց երկիրը<sup>4</sup>, արևելքից և հարավից Առանն ու

<sup>16</sup> Մինորսկու վերահիշյալ ուսումնասիրության մեջ տրված անդերեն թարգմանությունը, հիշտ է, շատ արժեքավոր է, բայց այնտեղ որոշ հապճեպություն է նկատվում:

<sup>1</sup> Պետք է հասկանալ՝ հարավից:

<sup>2</sup> Բնագրում Ալ-Լան (Ալաններ) տեղանվան մեջ ստաջին վանկը մատենագրի կողմից բնկալված է որպես արաբական որոշիչ հոդ (ալ-):

<sup>3</sup> Այսինքն կարգալ՝ Արմինիյա:

<sup>4</sup> Արար աշխարհագիրների մոտ Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և Ատրպատականը կազմում էին մի ամբողջություն «Եկլիմ առ-Ռիհար» քնդարձակ, բարեբեր հովիտների երկիր:

<sup>5</sup> Իմա՝ բյուզանդական Հայաստան:



Ատրպատականը և Ջաղիրայի<sup>6</sup> մի մասը, իսկ Հյուսիսից Առանի մի մասը: նա մեծ մասամբ լեռնային երկիր է և բաժանվում է երեք մասի. Առաջինը իր մեջ ունի Կարնս քաղաքը (Կալի կալա), Արշամաշատը (Շիմշաթ) և նրանց միջև ընկած հողերը, երկրորդն է՝ Վրաստանը (Ջուրղան), Բար ալ-Լան քաղաքը և նրանց միջև ընկած մասերը, իսկ երրորդը՝ Պարտավը (Քարդաա), Քալլականը և Գերբենար, իսկ ոմանք չորսի են բաժանում. առաջին մասը [ընդգրկում է] Քալլականից մինչև Շիրուան, նրանց միջև ընկած մասերով, երկրորդը՝ Քիֆլիսը, որը Վրաստանն է, Բար Ֆիրուզաբադը և ալ-Լաբզը, երրորդը՝ Վասպուրականը<sup>7</sup>, Գվինը և նախճավանը, իսկ չորրորդը՝ Հին Ջիլաղի շրջակայքը, որը կոչվում է Խարբերդ (Խարտ-բիրդ), Խլաթը, Արծնը (Արղան ալ-ուսմը)<sup>8</sup> և նրանց միջև ընկած հողերը: Հին ժամանակներում նրա ամեն մի մասի վրա իշխում էր մի աիրակալ, որն իր գործերը անկախ էր վարում: Գրանցից ոմանք մահմեդականներից էին, իսկ ոմանք էլ հայերից և հեթանոս ժողովուրդներից:

Հոտոմների և հայերի միջև [ընկած] են՝ Կասթամունիա քաղաքը, որը կոչվում է նաև Քասյամունիա, Սինուպը և Սամսունը:

Պոնտական ծովի վրա նրա<sup>9</sup> նավահանգիստը Տրապիզոնն է: նրա նշանավոր քաղաքներից է Երզնկան (Արղինջան), Մուշը, Արղնը (Արղան), Մանազկերտը (Մալազիիրդ), Քաղեշը (Քաղչիս), Խլաթը (Ախլաթ), այս վերջինիս համգան (Իմա՝ առաջին ա-ն) կարելի է նաև բաց թողնել, Արճեշը (Արջիշ) և Ոստանը (Ուասթան): Ըստ Իրն Սաիդի<sup>10</sup> Շիրուանը Առանից է:

Գվինը Հայաստանի մայրաքաղաքն է, չորրորդ [կլիմայից]: նրա երկարութունն է 72 [աստիճան], իսկ լայնութունը՝ 38: Սա մի մեծ քաղաք է և նրանում բրիտանացիները մեծաթիվ են: Այնտեղ մահմեդականների մզկիթը բրիտանացիների եկեղեցու կողքին է: Ասում են, որ դա ամենաբնտիկ և հարուստ քաղաքներից է և աիրակալների նստավայրը:

Հայաստանի մայրաքաղաքներից է նաև Գաուինը<sup>11</sup> չորրորդ [կլիմայի] վերջում երկարութունն է 72 աստիճան, իսկ լայնութունը՝ 39: նրա հետ աննշութուն ունեն Ալյուրջյան թագավորները: Վան քաղաքի երկարութունը 46 [աստիճան է], իսկ լայնութունը՝ 38:

3. Առաջին Շաղղաղյանը Մուհամմադ իրն Շաղղաղ իրն Կուրտակն էր: նրա երեան գալու և իշխանութուն ձևը բերելու պատճառն այն էր, որ երբ Սալլար Մարգուբան իրն Մուհամմադ իրն Մուսաֆիրը գերի ընկավ Ռալլի դարպասների մոտ 337 թվին (948) և չորս տարի գերության ու բանտարկության մեջ մնաց, Ատրպատականում իշխանութունը խառն վիճակում էր և ամեն մի տոհմի ու գերդաստանի տեր գրավեց երկրի մի մասը: Իսկ Մուհամմադ իրն Շաղղաղը հաստատվեց Գվին քաղաքում: Բնակչութունը քաղաքը նրան հանձնեց, որպեսզի պաշտպանի նրանց պատիվն ու կանանց և ապահով լինեն շարագործներից ու խոտվարարներից, ինչպես գալլամցիներից և ուրիշներից:

6 Իմա՝ Միջագետքի Հյուսիսը, աստացիորեն՝ կղզի (գետերի միջև):

7 Բնագրում՝ Սիրջան, որն անկասկած Բուսֆուրջանի աղավաղումն է:

8 Կարծում ենք, որ Արղն ալ-Ռում այստեղ նշանակում է Արծն, որովհետև Կարնս քաղաքի մասին արդեն խոսվել է:

9 Իմա՝ Հայաստանի:

10 Մեռած 1286 թվին:

11 Արար աշխարհագիրների մոտ ուշ շրջանում (ԺԳ դ.) թյուրիմացաբար տարբերում են Գարիլ և Գաուին կամ Գուին, որը նույն Գվինն է:



Մուհամմադ իրն Շաղղաղը տիրացավ նրան մոտավորապես 340 թվին (951) և այնտեղ հաստատվեց իր ընտանիքի, տոհմի և հետևորդների մի փոքր խմբի հետ:

4. Սալլար Երրահիմ իրն Մարզուբանը, որը Ասորպատականի որոշ մասերում փոխարինում էր իր բանտարկյալ հորը, երբ տեղեկացավ այս մասին [լուր] ուղարկեց Գիրմուսի<sup>12</sup> տիրոջը և նրան թելադրեց [Մուհամմադի դեմ] պայքարելու, նրան պաշարելու և դուրս բշխելու մի ծրագիր:

Այս անհավասար հետևելով սույն ծրագրին, հավաքեց մի բիրտ բանակ հաշերից, լիզգիներից և ուրիշ անհավատներից ու խաղաց դնաց Մուհամմադ իրն Շաղղաղի դեմ: Սա երբ լսեց լուրը, կանչեց իր մարդկանց, որոնք պատրաստվեցին նրա (հարձակվողի) դեմ կռվելու ու կասեցնելու նրան: Եվ դուրս եկան քաղաքից Ալլահին վստահելով:

Այդ անիծյալների հետ հանդիպեցին Արաբս և Մանսամմուն<sup>13</sup> գետերի միջև և խիստ ճակատամարտ տեղի ունեցավ: Մահմեդականները հաղթեցին, իսկ անհավատները պարտվեցին և նրանցից փրկվեցին միայն նրանք, որոնք թաքնվել էին ծառատանների և թփուտների մեջ:

Իսկ Մուհամմադ իրն Շաղղաղը հաղթական վերադարձավ Դվին քաղաքը և օգնություն խնդրեց բնակչությունից, ստեղծելու համար քաղաքին մոտիկ մի այնպիսի վայր, որտեղ իր մարդիկ կապաստանեին իրենց երկխաներով, որովհետև նա անհանգիստ էր լիզգիների կողմից [հարձակումից]: Նրան օգնեց քաղաքի ժողովուրդը և նա նրանց օգնությամբ կառուցեց մի ամրոց, որն անվանեց Տալլ Հասլի<sup>14</sup> և այնտեղ տեղափոխեց իր ընտանիքը: Սա գտնվում է Դվին քաղաքից մի ձայնընկեցի հեռավորության վրա:

Այս լուրը հասավ Սալլար Երրահիմ իրն Մարզուբանին, որն Արդարիլումն էր և ուղարկեց մի մեծ բանակ զանազան տեղալի դաշամցիներից, քրդերից և թարոմի<sup>15</sup> մարդկանցից: Սրանք խաղացին դնացին դեպի Դվինի դուռը և սրանց դիմախորեց Մուհամմադ իրն Շաղղաղը ու դիմադրեց մեծ ուժով: Երբ կռիվը սաստկացավ, քաղաքի ժողովուրդը շղթացավ ու դավաճանեց Մուհամմադին և նրան լքեց իր մի խումբ մերձավորների հետ: Երբ Մուհամմադը նրանց նահանջելը տեսավ ինքն էլ գիշերով նահանջեց դեպի իր ամրոցը և ապա իջեցրեց նրանց (իր մերձավորներին) և տարավ Հալաստանի կողմը<sup>16</sup> և թողեց Դվինը իր բնակիչներին, այնպես որ նրանք դաշամցիներից աուժեցին ինչպես որ պետք էր: Այդ ժամանակ [զվնեցիք] իրենց մեծամեծներից շատերին ուղարկեցին Մուհամմադ իրն Շաղղաղին, ներողություն խնդրելով նրանից, հրավիրելով վերադառնալ իրենց քաղաքը և երգվելով լինել հյու հնազանդ ու այլևս երբևր շղթավաճանել: Հասան նրան ու ասացին, մինչև որ նրա սիրտը մեղմացավ նրանց նկատմամբ և փրադարձավ նրանց հետ Դվին, կարգավորեց նրանց գործերը, պաշտպանեց նրանց կուսպաշանների ու ապականիչների շարիքից և

<sup>12</sup> دیر موسی Ա. երևյալների՝ Տեր Մաղաչ, այսինքն Վալուց Զորի խշխանը, որովհետև Մոզը նրա նստավայրերից էր:

<sup>13</sup> Գույե Մեծամորն է (Studies, 26).

<sup>14</sup> Եթև կարգանք Տալլ Հասլի (تل جثلی) կնշանակի մրջյունի բլուր (Studies, 9): Ակնբերեբեն Տիկնունի ամրոցն է:

<sup>15</sup> Նահանգ Կասպից ծովի հարավում:

<sup>16</sup> Հավանաբար Վասպուրական:



կարգավորեց քաղաքի ու բնակիչների վիճակը: Եվ ուժեղացավ Մուհամմադ իրն Շաղղաղի գիրքը ժողովրդի կառավարման և գործերի կարգավորման մեջ:

5. Վրաստան նահանգի և Հայաստանի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշոտ որդի Աբասի (Աշոթ իրն ալ-Աբբաս) և Շահնշահ տիադուն էր կրում: Սա փորձեց պաշարել Գվինը և նրա ժողովրդի դեմ կռվել: Զորք հավաքեց հայերից, լեզգիներից և այլ անհավատներից 30 հազար մարդկանց և իջավ նրան (Գվինին) մոտիկ մի վայրում, որը կոչվում էր Նաուար<sup>17</sup>: Նա ցրեց իր զորքը, որպեսզի այրեն բերքը և բանդեն շեները: Լուրը հասավ Մուհամմադ իրն Շաղղաղին, որն անտեղյակ նստած էր իր մի խումբ մարդկանց և մերձավորների հետ: Ուստի մի հնարամտությամբ մտածեց այս ուժեղ թշնամուն հա մղելու: Նա հրամայեց քաղաքում բոլոր գանձողներին՝ թե տղամարդկանց, թե երեխաներին՝ նստել անասունների վրա, ինչպես էշերի, կովերի, ձիերի և շորիների վրա, և այդ վիճակում քաղաքից դուրս գալ ու կանգնել քաղաքին մոտիկ, որպեսզի թշնամին տեսնի նրանց հոծ բազմությունը և լսի նրանց աղաղակն ու բացականչությունները<sup>18</sup> [և սպասել] մինչև որ Մուհամմադը հրամայի նրանց շարժվել և առաջ խաղալ: Այդպես էլ արեցին: Եվ դնաց նա մի խումբ ձիավորների և բաշերի հետ որպես առաջապահ՝ թշնամու կողմը, որը եղածից անտեղյակ ցրված էր ստվերոտ տեղերում պատասպարվելու սաստիկ շոգից: Նրանք շտապովեցին մինչև որ մահմեդականները հարձակվեցին կատաղած առյուծների նման և ամեն կողմից սրախողխող արեցին: Երբ կռիվը սաստկացավ, Մուհամմադ իրն Շաղղաղը նշան արեց քաղաքի մոտ հավաքված խմբին, որանք գոռացին բարձրաձայն և մոտեցան՝ թշնամուն տեսանելի լինելու շափ: Երբ թշնամին տեսավ նրանց լեռնանման հոծ բազմությունը, նրա աչքին ավազի հատիկներից ավելի շատ թվացին: Ալլահի օգնությամբ և օժանդակությամբ նա պարտվեց:

6. Երբ Սալլար Մարգուրանը բանախց փրկվեց 342 թվին (952) և վերջ ավեց բուրդ Գույսամի շարապործությունը, 343 թվին (954) մի խումբ դաշյամցիների ուղարկեց պաշարելու Գվինի բերդը և այնտեղից դուրս քշելու Մուհամմադ իրն Շաղղաղին: Գվինի բերդն այդ ժամանակ գանձվում էր մի խումբ դաշյամցիների ձեռքում, և երբ Մարգուրանի բանակը պաշարեց Գվինը, բերդի մեջ գանձվող դաշյամցիները դավաճանեցին Մուհամմադ իրն Շաղղաղին և բանակի մի մասը ներս թողեցին բերդի մի փոքր դռնից և ուղեցին հարձակվել Մուհամմադի, նրա բնտանիքի ու մերձավորների վրա: Նրանց հետ համաձայնվեց քաղաքի ժողովրդի մի մասը, աչք ունենալով նրա հարստության վրա: Երբ Մուհամմադն զգաց այդ բանը, հավաքեց իր տան անդամներին ու մերձավոր բարեկամներին: Նրանք վերցրին ինչ որ կարելի էր վերցնել և եկան բոլորը բերդի այն դռան մոտ, որը հայտնի է Գերեզմանների Գուռ անվամբ և այն դռան փակված, իսկ բանալին իրենց հետ չէր: Նրանց հետ էր նրա մի եղբորորդին՝ Շարաֆուն իրն Իսա, որը հայտնի էր իր քաջությամբ և ազնվությամբ: Սա մերկացրեց իր սուրը, խփեց կողպեքին և կտորեց այն: Գուռը բացին և դուրս բերեցին իրենց բնտանիքներին, դավակներին և իրենց ունեցվածքը: Ապա

<sup>17</sup> ناور دوشم مبینوسکوه دوعه کینز اور کوراورک (Studies, 25):

<sup>18</sup> Այստեղ օգտագործված է «բարբիթ» کبیر բառը, որը «Ալլահ Աբբաս» (Ասաված մեծ է) արտահայտությունն է:



անցան աչդ գիշեր Արաբս և Մանսամմուն<sup>19</sup> գետերը և ապաստանեցին Վասպուրականի (Ասֆուրջան) տիրոջ մոտ:

Ապա Մուհամմադ իրն Շաղղաղը նրանց, որոնք իր հետ էին՝ իր ընտանիքը և որդիները, թողեց Վասպուրականի տիրոջ մոտ երաշխիք վերցնելուց հետո և գնաց Հոռոմների (Ռուսի) թագավորի մոտ, օգնություն խնդրելով վերստին Գվինը ձեռք բերելու և այն գրավելու համար: Նա այնտեղ մի ժամանակ մնաց, բայց որոշ արգելքների պատճառով չհասավ իր նպատակին, վերադարձավ իր տեղը, և Վասպուրականում միացավ իր ընտանիքին, որդիներին ու տոհմին 344 թվին (955): Այստեղ եկավ նրա մահվան օրը և գնաց իր ճանապարհով նույն 344 թվին (955):»:

7. Նա թողեց երեք որդի՝ Լաշբարի արու-լ-Հասան Ալին, Մարգուրանը և Ֆաղլը: Երբ մեկավ Մուհամմադ իրն Շաղղաղը իր տոհմի գործերը տնօրինելու մեջ նրան փոխարինեց ավագ որդին Լաշբարի արու-լ-Հասան Ալի իրն Մուհամմադ իրն Շաղղաղը 344 թվին (955): Այդ ժամանակ Լաշբարին գնաց Դիրպուրի<sup>20</sup> տիրոջ մոտ և երկար ժամանակ մնաց մինչև 354 թվը (965): Իսկ նրա եղբայրը Ֆաղլ իրն Մուհամմադը գնաց Սալֆ ալ-Գաուլայի ծառա Նաջա ալ-Սալֆիի մոտ, որին նա կառավարիչ էր նշանակել Դիարբեքիի վրա: Մի ժամանակ մնաց նրա մոտ և լավ վերաբերմունք գտավ: Ապա Սալֆ ալ-Գաուլան զայրացավ իր այս ծառայի՝ Նաջայի վրա, ամբաստանեց նրան և հեռացրեց իշխանությունից, 336 թվին (967) Ֆաղլ իրն Մուհամմադը վերադարձավ իր երկու եղբայրների՝ Լաշբարիի և Մարգուրանի մոտ և կարճ ժամանակ մնալուց հետո որոշեց հեռանալ և գնալ այլ ծայրամասային իշխանների մոտ: Նրանք պնդեցին, որ նա մնա իրենց մոտ, իսկ նա երգվեց, որ շի ծառայի կուսպաշաներին և կապրի միայն մահմեդական երկրում: Նա դուրս եկավ իր ընկերակիցների հետ նպատակ ունենալով գնալ հասնել մինչև Սալլար Իրրահիմ իրն ալ-Մարգուրանի մայրաքաղաքը: Հասավ Գանձակ քաղաքը և իջևանեց նրա դարպասների մոտ իր մարդկանց, ծառաների և գործակիցների հետ, որոնք միացել էին նրան: Այստեղ մի կառավարիչ կար Սալլար Իրրահիմի կողմից (նշանակված), որը կոչվում էր Ալի առ-Տաղի: Մա ողջունեց նրան, հյուրասիրեց և սիրալիր վերաբերվեց ու խոստացավ, որ կգրի Սալլարին և կհաշտի նրա վիճակի մասին, որ նրան քաղաքի հասույթից թողակ նշանակի, որպեսզի գրեցիներին այն պաշտպանի և հետ մղի գողերի ու շարագործների և, մանավանդ, սևորդիների<sup>21</sup> ոտնձգությունները: Այդ քաղաքի զարդանների մոտ հավաքվել էին մի խումբ մարդիկ ալ-Սարիլյա<sup>22</sup> կոչված, որոնց մեջ կային քաղմաթիվ ձիավորներ՝ մոտավորապես չորս հարյուր: Սրանք միացել էին սևորդիներին, միախառնվել նրանց հետ, իջել Քուսի ափը և ապաստանելով ծառաստաններում ու թփուաներում, կողոպտում էին այս ավանների բերքը և ասպատակ սփռում:

<sup>19</sup> منصورون կետերի շնչին փոփոխությունը կարելի է կարդալ منصور «Մասամուր»:

<sup>20</sup> دیرزور գրչի սխալ է կամ գուցե Վաշոց ձորի աղավազումը:

<sup>21</sup> سیاوردیه Սիյաուարդիլյա: Կարծվում է, որ սրանք հունգարական ծաղում ունեն (Studies, 26):

<sup>22</sup> السرية հավանաբար ալ-սարիլյա բառի աղավաղումն է, որը Գաղեստանի հյուսիսում ապրող ժողովրդի անուն է:



Այս կառավարիչը Ֆաղլ իրն Մուհամմադի օգնությունը դիմեց, որպեսզի նրանց ետ մղի և եթե առիթը գտնի՝ պատժի նրանց: Երբ նրանք այս վիճակում էին քաղաքում մի վայնասուն բարձրացավ, թե նրանք հասել են Մուրմին գյուղը բերքը կողոպտելու և թե մարդիկ վերցրել են զենքերը և դուրս են եկել Գանձակից: Հեծավ Ֆաղլը իր բնակիչների հետ, առաջ խաղաղ նրանց կողմը և խիստ կռփ մեջ փախուստի մատնեց նրանց: Շաղղաղյանները հալածեցին նրանց և սպա սպահով վերադարձան: Երբ քաղաքի բնակիչները իմացան, թե ինչ էր կատարվել ավելացավ նրանց հարգանքը և սկսեցին ավելի ու ավելի փստահել նրան: Եվ այսպես մնաց Ֆաղլը մինչև 359 թիվը (969):

Այդ ժամանակ նա որոշեց զնալ Ատրպատական և նրա մոտ եկան Գանձակի մեծամեծներն ու ասացին «մի հիմարացիր ով ամիրա, մնա քո տեղում և [մարդ] ուղարկիր եղբորդ Լաշքարիին, որպեսզի այս քաղաքը նրան հանձնվի և նա ձեռք քաշի անհավատներին ծառայելուց և թող Ալլահն ու դուք լինեք մեր ապաստանը այս ամբարիշտների շարիքների դիմաց»: Եվ նա կատարեց ինչ լսել էր նրանցից և ինչ որ իր սիրտը վկայում էր: (Մուհամմադակ) ուղարկեց իր եղբորը Լաշքարիին, հրավիրեց նրան և տեղեկացրեց մարդկանց ասածների մասին, թե Գանձակի դրավումը ապահովված է: Երբ լուրը հասավ Լաշքարիին սա ոչինչ չարեց, այլ շար ու սխալ մտադրություններ վերադրեց նրան: Այդ ժամանակ Ֆաղլը իր եղբորը բերել տալու մի հնարք մտածեց: Նա իր մի ծառային ուղարկեց եղբորը՝ Լաշքարիին տեղեկացնելու, որ ինքը հիվանդությունը է բռնված և չի կարող ձի նստել: Լաշքարին անմիջապես ձի նստեց և այդ ծառայի հետ եկավ: Ծառան հասավ և լուր բերեց Ֆաղլին, որ Լաշքարին իջել է այսինչ գյուղում: Սա անմիջապես հեծավ և դիմավորեց իր եղբորը՝ Լաշքարիին: Նրանք սղջադուրվեցին և արտավեցին: Ապա Լաշքարին նրան մեղադրեց ասելով «Փառք Ալլահին դու առողջ ես, էլ ինչն էր քեզ մղում լսելու այն ինչ որ ցավ պատճառեց մեր սրտերին»: Ասաց նրան Ֆաղլը «Ով իմ ամիրա եղբայրս, արդյոք ժամանակը չի՞ եկել, որ դու հրաժարվես հողագործ անհավատների ծառայությունից և առավոտ երեկո խոզերի հետ անցկացնելուց ու ազանի փոխարեն գանգերի ձայնը լսելուց, իսկ այս քաղաքը մեզ հանձնել են ինքնակամ և իրար միջև համաձայնությունով»: Իսկ Լաշքարին հակառակվեց նրան այս հարցում և ասաց «Դու գիտես, եղբայր իմ, որ մեր հայրը ի՞նչ արեց Գլխի քաղաքում և ահա քսան տարի է որ թափառում ենք, մեզ ոչ մի տեղ չեն բնդունում և մեր կյանքը ոչ մի ժամանակ էլ քաղցր չի լինի: Ուստի եթե մտնենք այս քաղաքը մեր դեմ դուրս կգա նրա տերը, կպաշարի ու կնեղի մեզ, իսկ մենք փոքրաթիվ խումբ ենք և ո՞վ պետք է ազատի մեզ նրա ձեռքից: Կան որոշ կարծիքներ, որոնք սխալ են և նման դեպքերում ամեն կարծիք չէ, որ հիշա է: Մենք արդեն մի գաս ունեցանք և անցածը մեզ բավական է»: Ֆաղլն ասաց՝ «մարդ պետք է բարձրացման ձգտի և եթե ձեռք բերի իր ուղածը, նպատակին հասած կլինի և եթե քայլերը անբավարար լինեն մեղադրելու ոչինչ չկա, որ նա որևէ բանի ձգտել է կամ ցանկացել»:

8. Համաձայնվեց Լաշքարին իր եղբոր Ֆաղլի այս խոսքերի և մտքերի հետ և բնդունեց նրա խնդիրը ու վերադարձավ Ֆաղլը Գանձակի դռան մոտ, որպեսզի հավաքի քաղաքի բնակիչներին և ուխտը նորոգի: Քաղաքի առջիսի<sup>23</sup> անունն էր Յուսուֆ ալ-Կազզալ<sup>24</sup>: Բերել ավելց սրան և նրա հետևորդներին և

<sup>23</sup> Նշանակում է պետ:

<sup>24</sup> Մետաքսի գործով զբաղվող:



համաձայնությունը կնքեց նրանց հետ և բուլոբը միասին երգվեցին, որ հենց որ կաշքարին և Ֆաղլը շարժվեն, ըստ նախապես դժված ծրագրի, քաղաքի դռները բացվեն, ձերբակալեն կառավարչին և հանձնեն նրան: Երբ նրանց միջև քաղաքը հանձնելու մասին համաձայնություն կայացավ, Յուսուֆ ալ-Կադզազը հավաքեց քաղաքի երիտասարդներին և զինեց նրանց: Նրանք դիմեցին կառավարչի տունը և նրան ձերբակալեցին ու բացին [քաղաքի] դռները, իսկ կաշքարին մտավ ու նստեց բարձրի ու ամիրայական աթոռի վրա 360 թվին (971):

Երբ լուրը հասավ Արդարի՛ Սալլար Իբրահիմ իրն ալ-Մարզուրանին սա առաջ խաղաց իր գորքով 361 թվին (971) և սլաշարեց Գանձակ քաղաքն ու կովեց կաշքարիի դեմ և նրանց միջև տեղի ունեցան պատերազմ և ճակատամարտեր, որոնց մասին կարելի է երկար խոսել: Սակայն երբ շահվեց, հաշտվեց կաշքարիի հետ և Գանձակի դռնից վերադարձավ Արդարի՛: Իսկ կաշքարին բարեկարգեց երկիրը, հեռացրեց ապականիչներին և գալչամցիներին դուրս բռնեց նրա դավառներից: Մարդիկ հանգստացան ու բարձրացավ նրա հեղինակությունը և գործերը հաջող գնացին: Կաշքարին օրեցօր քնդարձակեց իր թագավորությունը մինչև որ տիրեց ամբողջ Առանին և Հայաստանի մի մասին: Նա իր հպատակների գործերը լավագույն կերպով էր ղեկավարում և իր զինվորների հետ վարվում էր մեծ հմտությամբ, մինչև որ հասավ 368 թվը (978), երբ մահացավ ալ-Կաշքարի Աբու-լ-Հասան Ալի իրն Մուհամմադ իրն Շահադազը իր աթոռանիստ Գանձակում: Նրա իշխանության տևողությունը միայն իր ցեղի վրա մտավորապես 24 տարի էր, իսկ իր ցեղի և Գանձակ քաղաքի ու նրա բոլոր գավառների վրա՝ 8 տարի էր:

9. Իշխանության մեջ նրան հաջորդեց Էդրալը ալ-Մարզուրան իրն Մուհամմադ իրն Շահադազ իրն Կուրտակը 368 թվին: Կաշքարին ուզում էր, որ իշխանությունը իրենից հետո լինի ալ-Ֆաղլ իրն Մուհամմադին, որովհետև նրան ավելի էր սիրում ու նախընտրում իր Մարզուրան եղբորից, նրա խելքի համար և մանավանդ, որ նա էր այս երկրին տիրանալու պատճառը [հանդիսացել]: Սակայն գորքը և ժողովուրդը հակված էին զեպի Մարզուրանը: Նրանց մայրը սիրում էր Ֆաղլին և նրան էր հակված. Մարզուրանը սիրաշահում էր նրան և ստացել էր նրա համաձայնությունը:

Մարզուրանն իշխեց իր եղբոր փոխարեն և նրա ժամանակ տեղ գտան շատ սխալներ և ղեպքեր նրա կարճամտության և վատ կառավարման հետևանքով: Մարզուրանը իշխանության մեջ մնաց մինչև 374 թվը (984), երբ [ոմանք] թունավորեցին նրա և եղբոր ալ-Ֆաղլ իրն Մուհամմադի հարաբերությունները, այնպես որ [վերջինս] որոշեց սպանել Մարզուրանին: Այնպես պատահեց, որ Մարզուրանը մի օր ձի նստած ղնացել էր օրսի և պատահաբար նրա ստրուկները հեռացան նրանից եղնիկներ հետապնդելու համար: Հարձակվեց նրա վրա եղբայր Ֆաղլը, սուրը մերկացրեց, հարվածը հարվածի հետևից խփեց Մարզուրանի գլխին մինչև որ սպանեց նրան, և սա ընկավ ձիու վրայից մեռած վիճակում: Մարզուրանի իշխանությունը տևեց մտավորապես 7 տարի:

10. Ֆաղլը եկավ քաղաք և իր ծառաներից մի խումբ ուղարկեց ձերբակալելու Մարզուրանի որդի Շիրուֆին: Նա բնակիչներից թաքուն մտավ քաղաք և հրամայեց դռները փակել: Իր եղբոր՝ Մարզուրանի սպանությունից հետո Ֆաղլը 375 թվին (985) նստեց իշխանական աթոռի վրա: Նա հաստատվեց իր իշխանության մեջ և այն վարեց լավագույն կերպով և առաջ խաղաց ու գրավեց Պարտավն ու Բալլականը 383 թվին (993): 417 թվին (1026) ափխաղաց տերը



մտալ Առանի երկիրը և օրեր շարունակ սլաշարեց Շամքորը, նրա դեմ դուրս եկավ Ֆաղլը մեծ բանակով և կռվեց ու հաղթեց նրան և սպանեց նրա զորքից ավելի քան տասը հազար մարդ, իսկ ամխազաց տերը սլարտված վերադարձավ իր երկիրը: 418 թվին (1027) Ֆաղլը հրամայեց կառուցել մի կամուրջ Արաքս գետի վրա, որը նրանից մնաց որպես մի մեծ հուշարձան: 421 թվին (1030) Ֆաղլն իր որդի և ժառանգ Մուսա իրն ալ-Ֆաղլին մի զորամասով ուղարկեց կռվելու իր մյուս որդի Ասրույեյի դեմ, որն ապստամբվել էր Բալլականում իր հոր և եղբոր դեմ և զորք հավաքելով ուզում էր հարձակվել իր հոր վրա: Առաջ խաղաց Մուսան իր եղբոր դեմ հենվելով ուսս զորքի վրա, որոնցից մի խումբ մոտավորապես 38 նավի վրա մտել էր Շիրվանի երկիրը: Շիրվանի տերը Մինուչեհրը Արաքսի վրա կռվել էր նրանց դեմ որպեսզի արգելի նրանց առաջ-խաղացումը [Արաքսի հովտով], սակայն նրանք ջրահեղձ էին արել մահճեղականների մի խումբ: Մուսա իրն ալ-Ֆաղլը դուրս բերեց նրանց, տվեց մեծ գումարներ, տարավ իր հետ Բալլական և նրանց միջոցով գրավեց այն, ձերբակալեց իր եղբայր Ասրույեյին և սպանեց նրան: Ապա ուսաները դուրս եկան Առանից դեպի Հոռոմների [երկիրը] և այնտեղից տարածվեցին դեպի ուսսայ [երկիրը]:

422 թվին (1031) շարաթ օրը Աղհա տոնին մեռավ ամիրա ալ-Ֆաղլ իրն Մուհամմադ իրն Շաղղաղը, որի իշխանությունը 47 տարի տևեց:

11. Ապա իշխանությունը վերցրեց նրա որդին և ժառանգը Աբու-լ-Ֆատհ Մուսա իրն ալ-Ֆաղլ իրն Մուհամմադ իրն Շաղղաղը զու-լ-Հիջլա [ամսում] 422 թ. (նոյեմբեր 1031): Այդ ժամանակ ուսաները երկրորդ անգամ հարձակվեցին: Նա գնաց նրանց դեմ կռվեց Բաբույեյի մոտ, դուրս հանեց իր երկրից և մեծ կոտորած տվեց: 425 թվին (1034) Աբու-լ-Ֆատհ Մուսայի դեմ ապստամբվեց որդին Լաշքարի Ալի իրն Մուսան, որը դավադրարար սպանեց նրան 425 թվին (1034): Նրա իշխանությունը 3 տարի տևեց:

12. Իշխանությունը վերցրեց մարդասպան որդին՝ Լաշքարի Ալի իրն Մուսա իրն ալ-Ֆաղլ իրն Մուհամմադ իրն Շաղղաղը 425 թ. (1034): Նա սփղծ էր, վատ մտքերի տեր և ամուսնացավ իր հոր հարձի հետ: Նրա իշխանության տարիները խռովահույզ էին, օղուզների<sup>25</sup> և այլ թշնամիների հարձակումներից ո՛չ նա հանդիստ ուներ ո՛չ էլ իր հպատակները: Կինելով թույլ և ճնշված, նա մի բերդից մյուսն էր տեղափոխվում մինչև որ մահացավ 441 թվին (1049): Իշխանությունը 15 տարի էր:

13. Նրա փոխարենը դրեցին որդուն՝ Անուշիրվան իրն ալ-Լաշքարի Ալիին, որի զօրծերը վարում էր Աբու Մանսուր սենեկապետը (հաջիր): Սա զորավարների և մերձավորների հետ համաձայնություն եկավ որոշ բերդեր անհավատներից գիշելու համար, [այսինքն՝] Թաթիանը, Մուջբանը և ալ-Բալլան Շաքիի<sup>26</sup> տիրոջը, Քրմստանը՝ Դիզոններին, իսկ Քրդմլան<sup>27</sup> բերդը՝ ամխազներին ու Ռուս-

<sup>25</sup> Բնագրում الغز (ալ-գուզ):

<sup>26</sup> Արաք մատենադրություն մեջ Շաքի է կոչվում Աղվանից թագավորությունը, սակայն այս բնագրում պատմիչը նկատի ունի Կաթեթիան:

<sup>27</sup> Թաթիան (طاطيان) Մուջբանը (موچکنک) ալ-Բալլա (البيضا սպիտակ) Քրմստան (کرمستان) և Քրդմլան (کردملان) բերդերի տեղագրումը հայտնի չէ: Վերջինս հավանաբար Գարդմանն է:



տակը՝<sup>27</sup> ա Հոսոմներին, որպեսզի այլևս շքանկանան Առանին [տիրել], որովհետև նրանք ձգտում էին նրան՝ Լաշքարի թուլության և որդու Անուշիրվանի անշափահաս լինելու պատճառով: Երբ մեծամեծները խնայան Արու Մանսուրի և այլոց մտադրության մասին հավաքվեցին այ-Հայսամ իրն Մայմուն ալ-Բախի՝ կաշեդործների պետի մոտ, Շամբորի շրջակայքի բանակատեղիում: Նրանք մտածեցին և ասացին «եթե այս բերդերը և շրջակա վայրերը անհավասանների ձեռքն ընկնեն ապա այս քաղաքը կկորչի և մեզ կմնա միայն ամբողջովին հեռանալ այս քաղաքից մեր ընտանիքի և որդիների հետ, որովհետև այս ստորացման շենք դիմանա»: Բերդում դանվողները զգացին [զալիք] շարիքը, իսկ սենեկապետ Արու Մանսուրը, որն այնտեղ էր, կանչեց Հայսամին և հրամայեց փակել քաղաքի դուռը: Կահթանը կաթիրի<sup>28</sup> հետ թարնվեց և մեծամեծներից մնաց միայն Հայսամը իր ծառաների հետ: Սենեկապետի մերձավորները շրջապատեցին նրան որպեսզի բռնեն, բայց Հայսամն ու իր ծառաները իջան բերդից և մերկացրին իրենց դաշույնները և կանչելով Արու-լ-Ասուար Շավուր իրն ալ-Ֆադլի կովի նշանը՝ բաց արեցին քաղաքի դուռը: Երևան կեան Կահթանը, կաթիրը և այլ մեծամեծներ ու երկրի իշխանությունը հանձնվեց Արու-լ-Ասուար Շավուր իրն ալ-Ֆադլ իրն Մուհամմադ իրն Շադդադին 441 թվին (1049) Անուշիրվանի իշխան դառնալուց երկու ամիս հետո:

14. Սա նախ մտավ Շամբոր քաղաքը և նրա գործերը կարգավորելուց հետո զնայ Գանձակ, մտավ քաղաքը և միավորեց ամբողջ Առանի երկիրը ու նրա բերդերը, ձերբակալեց Անուշիրվանին և Արու Մանսուր սենեկապետին, նրա եղբայրներին ու որդիներին, որոնք ծանոթ էին որպես «Արու Հայսամ զպրի որդիներ» և Շադդադյան պետության մեծամեծներից էին: Արու-լ-Ասուարը նրանց բոլորին ձերբակալեց և վերականգնեց դրեթե մահվան շեմին հասած պետության վարկը: Ուժեղացավ [պետությունը] և կարգավորվեց հայաապկների ու զորքի վիճակը: 445 թվին (1053) նա զնայ և վրացիներից զենքով խլեց Բասրա ամրոցը և այն ամրացրեց մարդկանցով, մթերքով ու զենքերով: Այդ ժամանակ նա իր որդուն Արու Նասր Իսքանդար իրն Շավուրին ուղարկեց Գվին քաղաքը և նրան հանձնեց նրա ենթակա շրջանները: 454 թվին (1062) Թիֆլիսի մեծամեծներից մի խումբ կեան խնդրելու, որ մարդ ուղարկի իրենց բերդը նրան հանձնելու համար, որովհետև նրա տեր Զաֆար իրն Ալին մահացել էր և թողել երկու որդի՝ Մանսուր և Արու-լ-Հայսամ, իսկ սրանց միջև երկպառակություն էր ընկել բերդին տիրելու համար: Սակայն քաղաքի ժողովուրդը երկուսին էլ հեռացրել էր և դիմել Արու-լ-Ասուարին վերահիշյալ խնդրանքով, որ մարդիկ, զենք ու մթերք ուղարկի: Արու-լ-Ասուարը ուղեց պատասխանել նրանց, սակայն նրա վեզիր Բախտիար իրն Մալմանն արդելեց նրան, ասելով՝ «Այլահր պիտի բաց անի քո առօն Թիֆլիսի ամրոցը շրջանը և այդ բերդն էլ կամա թե ակամա քո ձեռքը կընկնի» և ավելացրեց՝ «բայց սա կարող է պատճառ դառնալ քո մարդկանց բաժան բաժան լինելուն և քո փողիքի իզուր տեղը կարշելուն»: Եվ Արու-լ-Ասուարը հրաժարվեց նրանց խնդրանքին բնդառաջելուց և նրանց վերադարձրեց բերդի բանալին: Նրանք վերադարձան և բանալին ու բերդը հանձնեցին Շաքիի տիրույթ՝ Գագիկի որդի Ախսարթանին, որն ընդունեց, լավ

<sup>27</sup> ա رستاق հավանաբար Թուսթափին է (Studies, 30):

<sup>28</sup> Բուն բնագրում այս երկու անձերի մասին հավանաբար հասակ խոսվել է, իսկ Մուսաշ-ջիմ Բաշի կողմից կրճատվելով մնացել են այս անորոշ տողերը:



վարձատրեց նրանց ու հետ ուղարկեց և ապա այն մեծ գումարներով ծախեց հողամասերի տիրոջը: Հողամասերի թագավորը անմիջապես պահապաններ ուղարկեց և մարդիկ, զենք ու մթերք մատակարարեց ու հրամայեց լեռնային ճանապարհները լայնացնել, որպեսզի հեշտացնի անհավատների անցքը այնտեղից զեպի խալամի երկիրը:

15. Այս 454 թվին (1062) Ալանները անցան Ալանաց գոներից և մտան Ասանի երկիրը ու շատերին սպանեցին: Նրանք գերեվարեցին ավելի քան քսան հազար հողի՝ աղամարդկանց ու կանանց, տղաների ու աղջիկների: 455 թվին (1063) Աբու-լ-Ասուարը Գանձակի արվարձանի շուրջը կառուցեց մի ամուր պարիսպ և վրան ամուր գոներ կախեց ու շուրջը խորը խրամատներ փորել տվեց և Գանձակը նախկինից մի քանի անգամ ավելի մեծացավ:

Այդ ժամանակ նա հարձակվեց Շիրվանի երկրի վրա, նրա տիրոջից զենքի ուժով խլեց Կուչմիյան բերդը և այնտեղ իր կողմից նշանակեց մի փոխանորդ և այլ մարդիկ: Նա պաշարեց Շիրվան բաղաբը, իսկ շիրվանյանները պայքարեցին նրա դեմ և սպարաուձյուն կրեցին: Նա հալածեց նրանց և մի մասին սպանեց ու նրանց մեծամեծներից զերի վերցրեց ավելի քան հիսուն ձիավորների, որոնք լեզգիների հայանի քաղերից էին և Քուարուաթի մեծամեծներից: Նա որպես ավար վերցրեց նրանց ճամբարում եղած բոլոր ձիերն ու խնչքը: Այնտեղից նա ուղղվեց զեպի Բարիդիյա դուռը և այնտեղ վրան խախեց, վերցրեց իր աղջկանը՝ Շիրվանի տիրոջ Սալարի կնոջը, նրա ունեցած բոլոր դանձերի ու ձիերի հետ: Նա վերադարձավ Առան և նույն տարվա ուշար ամսին (հուլիս 1063) վերադարձավ հարձակվեց Շիրվանի երկրի վրա, այրեց բերքն ու դյուղերը և վերադարձավ: 456 թվին (1066—67) Աբու-լ-Ասուարը կրկին գնաց Շիրվան, գրավեց Քուբը և Կաթրանը, վերցրեց Համավարը: Քրդական ցեղերը նրա կողմը հարեցին և անցան Քուբը, որպեսզի նրա շնորհներին արժանանան: Այնտեղից նա վերադարձավ իր նստավայրը: Ապա հաշտութուն կաշայցավ նրա և Շիրվանի տիրոջ միջև այդ տարվա ուշար [ամսին] և վերադարձրեց նրան Կուչմիյան ամրոցը բառատուն հազար դինար վճարելու խոստում վերցնելուց հետո:

16. 457 թվին (1065) սելջուկյան սուլթան Ալփ-Աբուլանը արշավեց Հայոց երկիրը և Հողամասերի երկիրը ու գրավեց շատ բերդեր և հանձնեց Ասանի տեր Աբու-լ-Ասուարին, որպեսզի միացնի իր թագավորությանը, քանի որ այն մոտ էր իր երկրին: Սուլն 457 թվի ուշար (հունիս ամսին) Աբու-լ-Ասուարը հավաքեց իր զորքը և մտավ Հայոց երկիրը և Հողամասերի երկիրը և շարժվեց զեպի Անի սահմանային ամրությունը<sup>29</sup> և գրավեց ու վերանորոգեց այն ինչ վնասվել էր և այնտեղ նշանակեց իր պաշտոնյաներին և ապահովեց զինամթերքով ու մարդկանցով: Ապա մտավ Հողամասերի երկիրը, որն ասպատակեց, հետո Անիի մոտ գրավեց մի ամուր բերդ<sup>30</sup> և այնտեղ նշանակեց իր մերձավորներին ու վստահելիներին: Ապա թերվեց ու կանգ առավ Վիջին<sup>31</sup> բերդի դռան առաջ, որն ամուր էր ու անառիկ և Հայոց բերդերից լավագույնը: Բանակ դրեց նրա շուրջը և հարձակմամբ գրավեց այն և այնտեղ բնակեցրեց իր վստահելիներին, և ապա սուրաց զեպի Գանձակ: Երբ նա այնտեղ իջավ և իր զորքը ցրեց, ալանները

<sup>29</sup> نجر (սաղր) օգտագործվում է սահմանամերձ բերդի կամ ամրացված քաղաքի իմաստով:

<sup>30</sup> Հավանաբար Մաղաբերդը կամ Տիգնիսը:

<sup>31</sup> بجنی: գուցե Բջնի (بجنی):



զի-լ-կաադա (հոկտեմբեր) ամսին մեծ բազմությամբ դուրս եկան ալանաց դաներից և մտան Շաքիի երկիրը և Վրաստան, հետո Շաքիի անհալատների հետ ներխուժեցին Առան և այնտեղ ներթափանցեցին ու առանց արգելքի ասպատակեցին, սպանեցին, կողոպտեցին նրա դաշտերն ու սարերը, սահմանամերձ Շամքոր քաղաքի դռան առաջ [հավատի համար] կամալոր կռիուներից ավելի քան երկու հարյուր մարդ սպանեցին, ապա ասպատակեցին մինչև Գանձակի դուռը և նրա գյուղերում ում որ գտան սպանեցին: Իսկ Աբու-լ-Ասուարը իր զորավարների հետ գտնվում էր Գանձակում և նրանք համարձակություն չունեցան դուրս գալու և կռվելու նրանց հետ: Ապա անիծյալները գնացին Պարտավ և երեք օր կանգ առան նրա դռան առաջ, ասպատակեցին նրա շրջակայքը, հետո թողեցին անցան մինչև որ հասան Խանիկին (خانقین) Արաքսի մոտ: Նրանք Առանում մահմեդականներից ու նրանց դաշնակիցներից անթիվ անհամար գերիներ դուրս բերեցին: 459 թվին շորեքշաքթի զու-լ-կաադալի 7-ին (19 նոյեմբեր 1067) հավատքի համար պաշարող ամիրա Աբու-լ-Ասուար Շավուր իրն ալ-Ֆադլ ալ-Ղադին մեռավ Գանձակ քաղաքում և թաղվեց գլխավոր մզկիթում: Նրա իշխանության տևողությունն էր ամբողջ Առանում և Հայաստանի մի մասում 18 տարի, իսկ նրանից առաջ երկրի որոշ մասի վրա 28 տարի: Նրա ամբողջ իշխանությունը 46 տարի տևեց<sup>32</sup>:

17. Նա թողեց հինգ որդի՝ Ֆադլ, Աշուտ, Իսրանդար, Մինուշիհ, Մարգուրան և մի դուստր: Կենդանության օրոք նա ժառանգ նշանակեց իր ավագ որդուն՝ Ֆադլին և հնազանդության ուխտ վերցրեց [մյուս] որդիներից, իբր ցեղի բոլոր Շաղաղյաններից, զորքից և հպատակներից: Ուտի երբ նրա մահվան ժամը հասավ նրա փոխարեն իշխանական աթոռին նստեցրին ամիրա Աբու-լ-Ֆադլ իրն Շավուր իրն ալ-Ֆադլ իրն Մուհամմադ իրն Շաղաղին և նորոգեցին հնազանդության ուխտը, զոհունակություն հայտնեցին նրա եղբայրները, հետևեց նրան իր ցեղը և հնազանդվեցին նրա զորքն ու հպատակները:

Այս նույն 459 թվի զու-լ-հիջա ամսին (հոկտեմբեր-նոյեմբեր 1067) սուլթան Ալի-Աբուլանը մտավ Առանի երկիրը: Նրան դիմալորեց Ֆադլ իրն Շավուրը հնազանդությամբ ու ստրկական խոնարհությամբ, ներկայացրեց նրան իր գանձերի բանալիները և հանձնեց իր ունեցած բոլոր սպահաստները: Այսպես նրան ներկայացավ նաև Շիրվանի տերը Ֆադլբուրդ իրն Սալարը նվերներով ու ծառայության պատրաստակամությամբ:

460 թվի Մուհառամ ամսին (նոյեմբեր 1067) սուլթանը արշավանքի դուրս եկավ և մտավ Շաքիի երկիրը, Վրաստան և ապա ափսաղների երկիրը. շատերին կոտորեց, գերեվարեց և կողոպտեց ու բերդեր գրավեց անհալատների երկրում, հետո իր վերագարծին գերի վերցրեց Թիֆլիսի երկու տերերին՝ Մանսուրին ու Աբու-լ-Հալջային և Թիֆլիս սահմանային բերդը հանձնեց Ֆադլ իրն Շավուրին:

Նույն տարվա առմադանին (=1068 թ., օգոստոս ամիս) Ֆադլը գնաց Թիֆլիս բերդի վրա և այնտեղից արշավեց ափսաղաց երկիրը. և երբ մահմեդականների ձեռքերը ավարով լցվեցին, ափսաղները գրավեցին կիրճերը և նրանց գեմ կռվի դուրս եկան: Մահմեդականները սպարավեցին և Առանի տեր Ֆադլը մնաց քաղերի մի փոքր խմբի հետ և երբ իր հետ կռվող բոլոր ընկերները սպանվեցին ինքն էլ փախավ և մուլրովեց Հանապարհին ու հասավ Լիպարիտի որդի Իվանի

<sup>32</sup> Նրա իշխանության սկիզբը Գվինի գրավումից՝ այսինքն 1022 թվականից պետք է հաշվել:



(Իվանա իրն Լիֆարիտ) գյուղը, որը Շարիի և Վրաստանի<sup>33</sup> պատրիկներից էր: Սա նրան մի ժամ պահեց, ապա տարավ անիծյալ Ախսարթանին, երբ իջավ նրա մոտ սա (իմա՝ Ախսարթանը) անմիջապես դավադրարար ձերբակալեց նրան, օրեր շարունակ պահեց իր մոտ և ապա հանձնեց ամխազաց տիրոջը:

18. Երբ Առանի ժողովուրդը հույսը կտրեց, նրա փոխարեն իշխան նստեցրին Եղբոր՝ Շավուր իրն ալ-Ֆաղլի որդի Աշոտին, 460 թվի (օգոստոս 1068), շառուալ ամսին, իսկ զու-լ-կադա ամսին (սեպտեմբեր) երկու իրաքների տեր Շավ-թեգին ալ-Խասը թուրքերի հետ մտավ Առանի երկիրը, հետո անհավատների դեմ արշավանքի գնաց: Իսկ Ֆաղլ իրն Շավուրը ամխազաց տիրոջ մոտ գերության ու բանտարկության մեջ մնաց մինչև որ բարձրյալն Ալլահը նրան փրկեց 461 թվի շուամադա ամսին (1069 թ., ապրիլ) և եկավ իր թագավորությունը ու նստեց իշխանական աթոռին Գանձակում: Նրա Եղբայր Աշոտի իշխանությունը տևեց 8 ամիս: Ֆաղլի գերության ժամանակ Շիրվանի տերը ուխտն ու դաշինքը խախտել էր և կողոպտելով ու ասպատակելով մտել Առանի երկիրը: Ուստի երբ Ֆաղլը իշխանությունը վերստացավ, հավաքեց իր զորքը և շարժվեց Շիրվանի երկրի դեմ: Նա ցրեց նրանց (իմա՝ զորքը) Շիրվանի երկրում, ասպատակեց, վառեց ու կործանեց և վերադարձավ Գանձակ: 463 թվին (1070) Խուֆրայի<sup>34</sup> ժամանակ Ֆաղլի անունը սկսեց հիշվել Գերբենտ սահմանամերձ ամրության [մզկիթների] բեմերից, իսկ նախապես հիշվում էր Շիրվանի տիրոջ անունը: 464 թվին (1071) Ֆաղլը և Շիրվանի տերը հաշտվեցին և ուսմադան (հունիս ամսին) իրենց ամբողջ զորքով գնացին Մալուդ բերդի դուռը և հարձակմամբ պրավեցին, այնտեղ գտնվող բոլոր անհավատներին սպանեցին, ապա կործանեցին և հետքն էլ ջնջեցին:

19. 466 թվին (1073) Ֆաղլի դեմ ասպատամրվեց նրա որդի Ֆաղլուն իրն ալ-Ֆաղլ իրն Շավուր իրն ալ-Ֆաղլ իրն Մուհամմադ իրն Շաղղաղը և իր հորից իշխանությունը խլեց, իսկ զորքն ու հպատակները նրան ենթարկվեցին: Ապա նա գոհացրեց իր հորը՝ նրան բաժին հանելով Խարաթ<sup>35</sup> բերդն իր դավառով, և սա այնտեղ իրեն նվիրեց բարեպաշտության: Նրա իշխանության տեղությունը, իր բանտարկության ժամանակ Եղբոր Աշոտի տեղակալության շրջանով մեկտեղ, մոտավորապես 6 տարի էր: Իսկ Ֆաղլունը իշխանության վրա մնաց մոտավորապես երկու տարուց մի քանի ամիս պակաս:

Ալփ Աբուլան սուլթանը Գերբենտը և Առանը տվեց որպես ավատ իր ամենամեծ զորավար և ամենամերձավոր ծառա Շավ-թեգին: Սա եկավ թուրքերի բաղմությամբ 469 թվին (1075): Ֆաղլունը հրաժարվեց երկիրը նրան հանձնել, [սակայն] Շավ-թեգինը հարձակվեց և երբ [Ֆաղլունը] տեսավ, որ կռվելու և պաշտպանվելու անկարող է, իրենց աթոռանիստ քաղաք Գանձակը և Առանի այլ մասերը հանձնեց սուլթանի փոխանորդներին: Տեղավորվեցին թուրքերը Առանի երկրում, նրա դաշտերում ու սարերում և նրա բոլոր գավառներում ու բերդերում: Զնչվեց Շաղղաղյանների տունը և թուրքերի ձեռքն ընկան նրանց բոլոր գանձերն ու պահեստները:

Նրանց իշխանությունը տևեց 129 տարի, եթե սկիզբը համարենք Մուհամ-

<sup>33</sup> Ամբողջ բնագրում Զուրղան (Վրաստան) տեղանունը, կետերի շփոթության պատճառով, հաճախ այլ ձևերով է կարդացվում, ինչպես Խաղրան և այլն:

<sup>34</sup> Խուֆրան օրվա տիրակալի անվան հիշատակումն է մզկիթի բեմից:

<sup>35</sup> خاراթ — դուցե Չարեքն է:



մտղ իրն Շաղղաղ իրն Կուրտակի երեան դալը և Գվինի գրավումը 340 թվին (951): Իսկ և թե [սկիզբը] համարվի լաշքարիի կողմից Գանձակի գրավումը 360 թվին (970), ապա իշխանություն տևողությունը 107 տարի է:

Ալ-Ֆադլ իրն Շավուրը մնաց պաշարված և տարբ քերդում մի սրոշ ժամանակ, ապա այն նրանից վերցվեց և նա ձերբակալվեց: Այսպիսով ջնջվեց նրանց հիշատակը: Փառք նրան, որի հզորությունն անջնջելի է:

A. N. TER-GHEVONDYAN

СВЕДЕНИЯ АНОНИМНОГО ИСТОЧНИКА XI—XII ВВ.  
О ШАДДАДИДАХ ДВИНА И ГАНДЗАКА В ИСТОРИЧЕСКОМ  
СОЧИНЕНИИ МУНАДЖИМ-БАШИ

(Резюме)

Отрывок «О Шаддадидах» исторического сочинения Мунаджим-Баши (XVII в.), изданный несколько лет тому назад, представляет большую ценность для истории Армении в эпоху Багратидов. Сведения, сообщаемые в этом отрывке, помогают объяснению многих вопросов, касающихся восточных областей Великой Армении, и являются интересным источником для всех исследователей средневековой Армении.

Давая его перевод с арабского текста на армянский язык с кратким введением, автор стремится привлечь внимание медиевистов Армении к этому важному историческому фрагменту.

A. N. TER-GHEVONDIAN

LES TEMOIGNAGES D'UNE SOURCE ANONYME DES XI<sup>e</sup>—XII<sup>e</sup>  
SIECLES SUR LES CHADDADIDES DE DWIN ET DE  
ANDZAK DANS L'OUVRAGE HISTORIQUE DE  
MOUNADJIM—BACHI

L'ouvrage historique de Mounadjjim-Bachi (XVII<sup>e</sup> siècle) comporte un fragment sur les Chaddadides. Ce fragment fut publié quelques années auparavant. Il présente beaucoup de valeur pour l'histoire de l'Arménie du temps des Bagratides.

Les témoignages renfermés dans ce fragment nous éclairent sur nombre de questions relatives aux régions orientales de la Grande Arménie. Ils forment une source importante pour l'étude de la période médiévale de l'Arménie.